

# ԺՈՂՈՎՐԴԻ ՄՈՏ ՈՉ ՄԻ ՀԵՆԱՐԱՆ ՉՈՒՆԵՔ ԵՒ ՉՈՒՆԵՔ

Posted on August 17, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



## Սամվել Հովասափյան, Բեռլին, 19 Օգոստոս 2018

Բաց նամակ պրն. Շարմազանովին և պրն. Աշոտյանին

Հարգելի պրն. Շարմազանով,  
Հարգելի պրն. Աշոտյան,

Ձեր 18.08.2018 թվակիր արձագանքը, ուղղված՝ Նիկոլ Փաշինյանին, ինձ մոտ, որպես սփյուռքահայ, որպես Հայաստանի և հայ ժողովրդի, անցյալով, ներկայով և ապագայով  հետաքրքրվող, մի քանի հարցեր է առաջացնում: Իհարկե դա ձեր իրավունքն է, թե ինչպես եք ցանկանում մեկնաբանել նրա կառավարության 100 օրերը, ձեր ասելով բացթողումները, ոչ պրոֆեսյոնալ աշխատածևը, կապված Արցախի հիմնահարցի, երկրի կառավարման այլ դրվագներին: Այստեղ իմ նպատակը չէ, պաշտպանել Փաշինյանին և նրա կառավարությանը: Երևի դա կարող են իրենք և այլոք ավելի հաջողված անել:

Որպես հայ ցանկանում եմ այստեղ փորձել հասկանալ այն տրամաբանությունը, մղումը, որով առաջնորդված, դուք ցանկանում եք Փաշինյանին իր տեղը ցույց տալ, իսկ դա պարզորեն զգացվում է, ձեր կոշտ, արհամարական գրելաձևակից և նրանից, որ դուք ձեր ամբողջ գրելական արվեստը և կարողությունը գործի դնելով, ցանկանում եք հանրությանը տեղեկացնել, որ իշխանությունը սխալ մարդու ձեռքերում է, ուրեմն իզուր են նրա ասելիքները, բացատրությունները: Որ երկրում կա վերնախավ, որին է, ի վերուստ վերապահված, իշխանություն բանեցնելը, և Փաշինյանը այդտեղ անելիք չունի, ով շահարկելով «ամբոխի» թելադրանքը, զավթել է վարչապետի աթոռը, որը վաղ թե ուշ, նա պետք է լքի:

## Սամվել Հովասափյան, Բեռլին, 19 Օգոստոս 2018

Բաց նամակ պրն. Շարմազանովին և պրն. Աշոտյանին

Հարգելի պրն. Շարմազանով,  
Հարգելի պրն. Աշոտյան,

Ձեր 18.08.2018 թվակիր արձագանքը, ուղղված՝ Նիկոլ Փաշինյանին, ինձ մոտ, որպես սփյուռքահայ, որպես Հայաստանի և հայ ժողովրդի, անցյալով, ներկայով և ապագայով  հետաքրքրվող, մի քանի հարցեր է առաջացնում: Իհարկե դա ձեր իրավունքն է, թե ինչպես եք ցանկանում մեկնաբանել նրա կառավարության 100 օրերը, ձեր ասելով բացթողումները, ոչ պրոֆեսյոնալ աշխատածևը, կապված Արցախի հիմնահարցի, երկրի կառավարման այլ դրվագներին: Այստեղ իմ նպատակը չէ, պաշտպանել Փաշինյանին և նրա կառավարությանը: Երևի դա կարող են իրենք և այլոք ավելի հաջողված անել:

Որպես հայ ցանկանում եմ այստեղ փորձել հասկանալ այն տրամաբանությունը, մղումը,

որով առաջնորդված, դուք ցանկանում եք Փաշինյանին իր տեղը ցույց տալ, իսկ դա պարզորեն զգացվում է, ձեր կոչոտ, արհամարական գրեթե անհից և նրանից, որ դուք ձեր ամբողջ գրեթե արվեստը և կարողությունը գործի դնելով, ցանկանում եք հանրությանը տեղեկացնել, որ իշխանությունը սխալ մարդու ձեռքերում է, ուրեմն իզուր են նրա ասելիքները, բացատրությունները: Որ երկրում կա վերնախավ, որին է, ի վերուստ վերապահված, իշխանություն բանեցնելը, և Փաշինյանը այդտեղ անելիք չունի, ով շահարկելով «ամբոխի» թելադրանքը, զավթել է վարչապետի աթոռը, որը վաղ թե ուշ, նա պետք է լքի:

Դուք ուշացումով զարմացած եք, փորձում եք մշուշապատ, բայց չթաքնված արհամարանքով ձեր համար բացահայտել, թե որտեղի՞ց հայտնվեց այդ «ամբոխավար գավառացին», ով կարողացավ միայն իր «ամբոխավար հռետորական» ձիրքով, զավթել իշխանական աթոռը: Այդ 100 օրերի ընթացքում նա բավականին հաշիվներ է տակնուվրա արել, բավականին փոթորիկ բարձրացրել և շարունակելը խիստ վտանգավոր է երկրի ապագայի, իմա վերնախավի համար: Ո՞ւմ է ուղղված նման չթաքնված, բայց ժամանակավրեպ կոչը: Ինչպիսի՞ ժամանակներ եք աներկբա տեսնում: Դուք ցանկանում եք անտեսել այն իրողությունը, որ մարտահրավեր նետելով Փաշինյանին, մարտահրավեր եք նետում համայն աշխարհի հայությանը, ժողովրդավար երկրներին:

Պրն Շարմազանով, դուք գրում եք.

**«100 օր առաջ պրն Փաշինյան, դուք շահարկեցիք արյունահեղությունից, եղբայրասպանությունից ամեն գնով խուսափելու մեր դիրքորոշումը եւ շանտաժով հասար ձեր ուզածին»:**

Այսինքն ի՞նչ: Այսինքն հայ ժողովուրդը, նաև ձեր երեխաները և ձեր մերձավորները պետք է հավիտյանս շնորհակալ լինե՞ն ձեզանից, որ խուսափել եք արյունահեղությունից, այսինքն դուք դրա միջոցն ունեիք, կարող էիք դա անել, բայց չարիք, կեցե՛ք, որպես հայ, ես իմ խորին հարգանքն եմ մատուցում ձեզ: Չնայած գիտեմ, որ մարդկային պատմության մեջ և ոչ մի բռնակալ ինքնակամ չի հեռացել իշխանությունից, և գիտեմ նաև, որ դուք ծեռնապահ մնացիք, արյունահեղության չգնացիք, լավ գիտենալով, որ դուք, հանձինս Սերժ Սարգսյանի և ՀՀԿ-յան, հայ ժողովրդի մոտ ոչ մի հենարան չունեիք և չունեք, դա էր գլխավոր պատճառը, որ դուք ստիպված էիք, հրաժարվել իշխանությունից և ոչ թե ձեր բարի կամքն էր թելադրում այդ:

Դուք գրում եք նաև.

**«Ձեր իշխանության հարյուր օրվա ընթացքում արդեն իսկ վտանգավոր միտումներ են որդեգրվել. խոսքի, այլակարծության իրավունքի ոտնահարում, անմեղության կանխավարկածի ոտնահարում, այլախոհների անվտանգության**

**սպառնալիք, ՀՀ պետական ինստիտուտների և օրենսդրության ստորադասում սեփական շահերին, ազգային և քրիստոնեական արժեհամակարգի փլուզման փորձեր, բացահայտ հարձակում հայ ավանդական ընտանիքի և Հայ Առաքելական եկեղեցու դեմ,...**»:

Իսկ այրև. Աշոտյանը գրում է.

**«...Հետևողական կերպով Էրոզիայի ենթարկելով պետական ինստիտուտները, կառույցներն ու մեխանիզմները, պետությունը փոխարինելով “ԵՍ ու Ժողովուրդը” առաջին հայացքից ականջահաճո, իսկ իրականության մեջ հակապետական բանաձևով... վարչապետը փորձում է իրենով փոխարինել օրենքները, դատարանները, ներդրումային միջավայրը, գերատեսչությունները և այլն»:**

Իրականում այս խոսքերը շատ ավելի լավ բնութագրում են վերջին 20 տարվա, հայ ժողովրդի կողմից ամբողջովին մերժված իշխանությունների գործելակերպը: Իրոք որ հանրության համար մնում է հանելուկ, թե՞ դուք անցյալում ինչու էիք լռում, երբ այդքան տազնապած եք Հայաստանի պետականության ապագայով: Մոռացե՞լ եք, թե որտեղ էիք կանգնած դուք, վերջին տարիներին, ում թիկունքում:

Դուք մոռանում եք, բայց բոլորից ավելի լավ գիտեք՝ թե, ո՞ր իշխանությունների օրոք են, պետական բոլոր կառույցները միայն ու միայն հայ վերնախավին ծառայել, թե՞ **«օրենքները, դատարանները, ներդրումային միջավայրը, գերատեսչությունները»** ինչպես են աշխատել, որոնց դերը եղել է միմիայն պաշտպանել **«հայ ավանդական ընտանիքների»** այսինքն՝ Մանվելյանների, Սարգսյանների, հանցագործ գործունեությունը...

Հաստատ, որ միայն այդ ընտանիքները չեն, որ հանցագործ են դարձել և մենք, վերջնականապես հիասթափված, ու նաև վրդովմունքով, սպասում ենք հաջորդ ընտանիքների հանցագործության բացահայտմանը:

Այո, դուք մոռանում եք նաև՝ թե, ո՞ր իշխանություններն են **«հայ առաքելական եկեղեցուն»**, հանձինս կաթողիկոսի, իրենց համախոհը և սեղանակիցը դարձրել և նրան էլ ներքաշելով իրենց մեքենայությունների ոլորտը, այդպիսով նրան էլ են մերժելի դարձրել, հայ ժողովրդի լայն զանգվածների կողմից:

